Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Երևանի Ա.Պուշկինի անվան թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Միջառարկայական կապերի ապահովման կարևորությունն ու հնարավոր միջոցները հայոց լեզվի ուսուցման պրոցեսում

Վերապատրաստող, մենթոր՝ Գ. Մանուկյան

Ուսուցիչ՝ Ա. Ա. Արծրունյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 4

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ---------- 5

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻՆ ---7

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1 ----------12

ԴՍԻ ՊԼԱՆ 2 ---------- 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մեր ուսումնասիրության նպատակն է բնել միջառարկայական կապերի օգտագործումը հայոց լեզվի դասընթացին, ուսումնասիրել լեզվի ուսուցման գործընթացում հանրակրթական առարկաների միջառարկայական կապերի կարևորության դերն ու նշանակությունը, քանի որ այդ կապերը ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են :

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

ա. բացահայտել հայոց լեզվի դասընթացի առանձնահատկությունները,

բ. սահմանել միջառարկայական կապերի դերը ուսումնական գործընթացում,

գ.դասի/երի/ օրինակով բացահայտել միջառարկայական կապերի կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի ուսուցման գործընթացում:

3. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ուսումնասիրությունը արդիական նշանակություն ունի, քանի որ ներկայումս դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումը առանց երեխաների հետաքրքրության բարձրացման: Այն ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել հայոց լեզվի և գրականության դասընթացներին:
Եթե միջառարկայական կապերը մատչելի ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ապա դրանք կարող են ուսումնական գործընթացի առանցային հատվածը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլան: Հետևաբար՝ երեխաներին շրջակա աշխարհի մասին հնարավորինս բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտությունների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռորոշ նշանակություն ունի աշակերտների աշխարհանճանաչողության համար և այդ տեղեկատվությունը առավել հասանելի, ընկալելի կդարձնի ուսուցանվող նյութը: Միջառարկայական կապ կիրառելը աշակերտի համար համարվում է նաև դաստիարակությանը խթանող միջոց:

Հայոց լեզվի միջոցով միջառարկայական կապերի ստեղծումը ոչ միայն համապատասխան գիտելիքներ է տալիս այլ, օրինակ՝ հայոց պատմություն, հայ գրականություն առարկաներից, այլև աշակերտների մեջ արմատավորում է ազգային մտածողություն, միջառարկայական կապերի կիրառմամբ՝ պատմական կարևոր իրողությունների իմացություն, ազգային արժեքների գնահատում և այլն, ինչը կարևոր է ներկայիս աշխարհաքաղաքական բարդ ու հակասական ժամանակներում սեփական դիրքորոշումներ ունենալու համար:

4.Մեթոդաբանությունը

«Մեթոդ» բառը հունարեն նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Մեր օրերում այն գիտակցվում է որպես ուսուցչից դեպի աշակերտը տանող ճանապարհ, ուսուցչի և աշակերտի համագործակցության, սովորողների կողմից գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին տիրապետելու եղանակ:
Այսպիսով՝ ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության միջոց է, որով իրականացվում է ուսուցչի և սովորողների համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության վերոնշյալ արդյունքներին: Այն օգնում է ուսուցչին իրացնելու ուսուցման նպատակը, լուծել խնդիրները, ապահովել չափորոշչային պահանջները, սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մոթոդների իմացություն: Սակայն դա դեռևս բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու նախապես նշված արդյունքներից բխող մեթոդների ընտրության և կիրառության կարողությունը[1]:

Հայոց լեզվի ուսուցումը, յուրացումը, ուսուցչի և դասագրքի հաղորդած տեսական գիտելիքները ընդլայնում են աշակերտների քննադատական, գեղարվեստական մտածողությունը, կրթում նրանց գրական ճաշակը: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հայոց լեզվի ուսուցումը նպաստում է միջառարկայական կապերի ամրապնդմանը (հայոց

[1] Ալեքսանյան Լ. Ուսուցման մեթոդներ. Դրանց կիրառությունը// «Նախաշավիղ», Երևան, 2013, N2, էջ 52:

պատմություն, հայ գրականություն, երաժշտություն, նկարչություն և այլն): Լեզվական առաջադրանքների կատարումը գեղարվեստական երկերի միջոցով, նաև իրենց բովանդակությամբ ու ֆոնական մեկնաբանմամբ նպաստում են աշակերտի ազգային բնավորության և հայրենասիրության ձևավորմանը: Դրանք նպաստում են ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանը, այլև պատմական ճշմարտության գիտակցմանն ու գեղարվեստական մտածողության զարգացմանը: Նշված երկերի ուսուցումը հնարավոր է իրականացնել հետևյալ դասատեսակների օգտագործումով՝

դաս- դասախոսություն,
զրույց,
բանավեճ,
դաս-գրական դատ,
դաս-երկխոսություն,
ստուգողական հարցարանի բանավոր պատասխան,
երաժշտության ունկնդրում և տպավորությունների մեկնաբանում:

Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և ամենակարևորը՝ գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Ողջ ուսումնական գործընթացը կառուցվում է միջառարկայական կապերի հիման վրա: Ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի կիրառման անհրաժեշտության հիմնավորման համար բերվում են հետևյալ փաստարկները. «Որպես մեկ ամբողջականություն՝ տարբեր առարկաների շնորհիվ նյութի ուսումնասիրման հնարավորություն»[2]: Եվ այս տեսանկյունից հայոց լեզու և գրականություն, հայոց լեզու և պատմություն միջառարկայական կապերի ստեղծումը դպրոցականների հայրենասիրական դաստիարակության միջոցներից մեկն է, իր բազմաբնույթ բովանդակությամբ ու կիրառելիությամբ կարող է դիտարկվել այն եզակի միջոցը, որը դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների հետ ապահովում է միջառարկայական կապերը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մեր ժամանակներում կարևոր նշանակություն է ստանում առարկաների և գիտության համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Միջառարկայական կապերի միջոցով զուգահեռներ են անցկացվում երկու տարբեր առարկաների միջև: Ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև կապերը:

Ներկայումս դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումը առանց երեխաների հետաքրքրության բարձրացման: Այն ամենից շատ ու ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել հայոց լեզվի, գրականության և հայոց պատմության դասընթացներին:

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են մեթոդաբանական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթ: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդլայնմանը: Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, համադրելու կարողությունների ձևավորմանը: Այդ պարզ պատճառով հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը՝ որպես մանկավարժ, այլև որոշակի տեղեկատվական պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից:

Միջառարկայական կապի օգտագործումը երբեք և ոչ մի դասարանում ինքնանպատակ չպետք է լինի: Այն պետք է դառնա միջոց՝ հիմնական նպատակին հասնելու համար, պետք է զուգակցվի ուսուցման գործընթացում ընդհանուր և դասական ձևերի հետ: Միջառարկայական կապերի կիրառումը ակտիվացնում է աշակերտների մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը, որի իրագործումը հնարավորություն է ստեղծում կրկնել, վերհիշել կամ ձեռք բերել նոր տեղեկություններ, գիտելիքներ նյութական աշխարհի օրինաչափությունների մասին տարբեր առարկաներից:

[2] Максимова В.Н., Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.:Просвещение, 1984. с. 18, 20-21.

Միջառարկայական կապերը ուժեղացնում են բոլոր դիդակտիկական սկզբունքների դերն ուսուցման իրական գործընթացում՝ օգտվելով կրթության հաջորդականության սկզբունքից: Ուսուցման այս միջոցը նպաստում է դասն ավելի բովանդակալից և արդյունավետ դարձնելուն, թեմայի յուրացմանը: Մայրենիի, հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության դասավանդման ժամանակ, պայմանավորված ուսուցանվող նյութով, կարելի է ստեղծել տարբեր միջառարկայական կապեր: Հայոց լեզուն կարելի է շաղկապել գրեթե բոլոր առարկաների հետ: Ընդ որում՝ կարելի է նույն թեման ներկայացնել ոչ թե երկու, այլ ավելի շատ առարկաների համատեքստում:

Միջառարկայական կապերի անհրաժեշտությունը մանկավարժության համար նոր հիմնախնդիր չէ, և խնդրի լուծումը մշտապես հիմնավորվել է փիլիսոփայական հայացքներով, տարբերակված գործընթացի և գիտական կարողությունների ու հմտությունների ինտեգրման այս կամ այն աստիճանի ընդհանուր զարգացման ընթացքում: Գիտելիքների փոխանցման խնդրին, սովորողների կարողությունների ձևավորմանը, դրանց համադրմանը և նոր իրադրության մեջ կիրառելուն նվիրված են մի քանի մանկավարժների հետազոտություններ: Այսպես, Վ. Ն. Մակսիմովայի կարծիքով միջառարկայական կապերի բարեհաջող իրականացումը դրականորեն է ազդում ուսումնական գործընթացի վրա և նպաստում ակտիվ ձևերի կազմակերպմանը[3]: Առավել արդյունավետ է միջառարկայական կապերի իրականացումն այն դեպքերում, երբ այլ առարկաների ու դասընթացների գիտելիքները ոչ միայն ընդօրինակվում ու կիրառվում են որպես լուսաբանում, այլև գործածվում են որպես սովորողների մտածողության ակտիվացման միջոց, համեմատության ու ուսումնական նյութի ընդհանրացման, վերլուծության նպատակով և տարբեր ուսումնական առարկաների ուսումնասիրությամբ:

Միջառարկայական կապերը, արտացոլելով շրջակա աշխարհի երևույթների և գործընթացների փոխկապակցությունները, էական դեր են խաղում սովորողների մոտ համակարգային մտածողության զարգացման և ընդհանուր-ուսումնական կոմպետենտությունների ձևավորման գործընթացում. դրանք հնարավորություն են տալիս որևէ ուսումնական առարկայի ուսուցման արդյունքում կազմավորված կարողությունները, հմտությունները փոխանցել այլ առարկաների բնագավառ: Դիդակտիկայի տեսակետից՝ միջառարկայական կապերի իրագործումը որոշակիորեն բարձրացնում է ուսուցման գիտական մակարդակը, նպաստում՝սովորողների կողմից նյութի յուրացմանը: Բացի այդ, միջառարկայական կապերի բազմակողմանի իրագործումը հնարավորություն է տալիս օպտիմալացնել բնագիտական առարկաների ուսուցման գործընթացը և, դրանով իսկ կրճատել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը:

Միջառարկայական կապերի օգտագործումը հայոց լեզվի դասերին

Հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ոչ միայն գերազանց տիրապետի իր մասնագիտությանը՝ որպես մանկավարժ, այլև՝ որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից: Միջառարկայական կապերի կիրառումը ակտիվացնում է աշակերտների մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը, որի իրագործումը հնարավորություն է ստեղծում կրկնել, վերհիշել կամ ձեռք բերել նոր տեղեկություններ, գիտելիքներ նյութական աշխարհի օրինաչափությունների մասին տարբեր առարկաներից:

Ուսուցման այս միջոցը նպաստում է դասն ավելի բովանդակալից և արդյունավետ դարձնելուն, թեմայի յուրացմանը: Մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասավանդման ժամանակ, պայմանավորված ուսուցանվող նյութով, կարելի է ստեղծել տարբեր միջառարկայական կապեր: Հայոց լեզուն կարելի է շաղկապել գրեթե բոլոր առարկաների հետ: Օրինակ՝

1. Մենիմաստ բառեր և բնագիտական առարկաներ:
   Քիմիական տարրերի անվանումներն, օրինակ՝ ազոտ, ֆտոր, ֆոսֆոր, թթվածին և այլն, մենիմաստ են, և կարելի է շատ հեշտությամբ միջառարկայական կապ ստեղծել հայոց լեզվի և քիմիայի միջև:
2. Թվականի ուսուցումը և մաթեմատիկան:
3. Հատուկ անունների ուղղագրություն և աշխարհագրություն: Օրինակ՝ աշխարհագրական տեղանուններ՝ Արևմտյան Հայաստան, Սևանա լիճ, Խաղաղ օվկիանոս, Ռուսաստանի Դաշնություն և այլն:

[3] Абдуллаева Г. Д., Атажанов И. И., Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук, 2016, N3-3, с. 66-68. Гурьев А. И., Статус межпредметных связей в системе современного образования / А. И. Гурьев // «Наука и школа», 2002, N2, с. 41-45

4. Հատուկ անունների ուղղագրություն և գրականություն: Գրական ստեղծագործության անունը գրվում է մեծատառով և չակերտների մեջ:
5. Հատուկ անունների ուղղագրություն և պատմություն: Պատմական շատ կերպարներ ստացել են մականուններ՝ կապված, օրինակ, իրենց սխրագործություններով: Օրինակ՝ Արտաշես Առաջին Բարեպաշտ, Աշոտ Երկաթ, Տիգրան Մեծ և այլն:

6. Ոճագիտություն և արվեստ, նկարչություն:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Բնականաբար, նման առանձնահատուկ նշանակություն ունի սեփական պատմությունը նաև հայ ժողովրդի համար: Օրինակ՝ թվականների տեսակները ուսուցանելիս ուսուցիչը կարող է մեջբերել պատմական տարբեր իրողություններ՝ որոշ թվականների կիրառությամբ պայմանավորված՝ կապ ստեղծելով հայոց լեզվի ու հայոց պատմության միջև: Հայոց պատմության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Միաժամանակ սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի, շարունակականությունը: Հայոց պատմությունը բովանդակում է նաև դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր: Հայաստանը հին ժամանակներից սկսած եղել է եվրոպական և արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցության և փոխազդեցության կենտրոնում: Շփվելով տարբեր մշակույթների հետ, կրելով նրանց որոշակի ազդեցությունը, հայ ժողովուրդը, սակայն, պահպանել ու զարգացրել է ինքնատիպ քաղաքակրթություն, որի շնորհիվ հասել է մարդկության պատմության նորագույն փուլին և շարունակում է իր պատմական ընթացքը:

Գոյություն ունեն տարբեր առարկաների, այդ թվում՝ հայոց լեզվի ուսուցման կազմակերպման տարբեր եղանակներ: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է. ուսումնական աշխատանքը դպրոցներում ընթանում է դասի ձևով: Ուսուցման տարբեր փուլերում դասերի ընթացքում կիրառվում են տարբեր մեթոդներ[4]:

Հայոց լեզվի, ինչպես նաև հայ գրականության և հայոց պատմության հանրակրթական առարկայի գլխավոր նպատակը պատմական գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է: Այս առաջնահերթ նպատակից բխում են հետևյալ հիմնական խնդիրները.

- սովորողին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր – մշակութային արժեքներին,
- ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,
- ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում,
- օգնել հասկանալ պատմական իրադարձությունները, երևույթները և դասեր քաղել պատմությունից,
- ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցմանը,
- ամբողջացնել և համակարգել հայագիտական առարկաներից սովորողների ստացած գիտելիքները:

Հայոց լեզուն ուսումնասիրող աշակերտը պետք է պատկերացում ունենա հայ ժողովրդի պատմական ուղուն, քրիստոնեության ընդունմանն առնչվող գրականության մասին: Հինգերորդ դարը հայ ժողովրդի կյանքում բացառիկ ժամանակաշրջան է: Աշակերտները, որոնք մանկությունից պատանեկություն անցում են կատարում, ունեն վառ երևակայություն և առարկայական զարգացած հիշողություն, ուստի հայոց պատմության դասերին պատմական երկերի օգտագործմամբ կարելի է նրանց թելադրել հետաքրքիր փաստեր, հանձնարարել կարդալ համապատասխան գրականություն, տարբեր երկերից քաղվածքներ անել հայոց պատմության տետրում և այլն:

Հայոց լեզվի դասընթացին զուգահեռ աշակերտները հայ ժողովրդի պատմաքաղաքական իրողությունների մասին պատկերացում պիտի կազմեն նաև գրականության, հայոց պատմության դասընթացից:

---

[4] Մանկավարժություն (թարգմ. Հ. Հարությունյան), Երևան, 1948, էջ 176:

Բացի նշված առարկաների հետ միջառարկայական կապեր ստեղծելուց՝ հայոց լեզվի ուսուցման ընթացքում հնարավոր է նաև նկարչություն առարկայի հետ միջառարկայական կապերի ստեղծումը:

Օրինակ՝ որակական և հարաբերական ածականների քննության ժամանակ մեկնաբանման մեթոդի օգնությամբ աշակերտներին կարելի է հանձնարարել ուսումնասիրել հայ մեծանուն նկարիչների կտավները՝ բնութագրելով դրանք որակական ու հարաբերական տարբեր ածականներով: Ուսուցիչը կարող է աշակերտների մեկնաբանությունները ամփոփելով՝ ներկայացնել նշված հարցի պատասխանը: Ուսուցիչը նույն թեմայի ուսուցման շրջանակներում մեթոդները պետք է համադրի, փոփոխի, մշակի և ծրագրի այնպես, որ նույն դասարանում տարբեր կարողություններով սովորող աշակերտները ստանան իրենց կարողությունների համապատասխան գիտելիքներ ու հմտություններ և արդյունքում չտուժեն ոչ բարձր կարողություններով, ոչ էլ կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները:

Բացի ավանդական մեթոդներից՝ հայոց լեզվի ուսուցման ժամանակ կիրառվում են նաև ժամանակակից, մասնավորապես փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ, որոնց հիմքում ընկած են սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը: Այս մեթոդների առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով՝ մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողություններ:

Հայոց լեզվի յուրացումը էապես պայմանավորված է ուսուցման նոր մեթոդների ներդրման արդյունավետությամբ: Ուսուցման միջառարկայական կապերը, փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդները նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր դարձնելու պայմանների ստեղծմանը: Աշակերտներն այդ դեպքում պասիվ ընկալողից վերածվում են գիտելիքների ստացման գործընթացի ակտիվ մասնակցի:

Հայոց լեզվի ուսուցման շրջանակում, ի տարբերություն ավանդական մոտեցումների, հայ գրականության հետ միջառարկայական կապերը երևան են բերում հետևյալ առանձնահատկությունները.

- ներկայացնում են տարասեռ խմբավորում,
- ստեղծում են պատասխանատվություն խմբի և սեփական անձի համար,
- ուսուցչի կողմից իրականացվում է մշտական վերահսկողություն,
- կատարվում է դերերի բաշխում, նպատակների հստակ սահմանում,
- գրականության օգտագործմամբ պատմական իրողության ուսուցումը ենթադրում է քննադատական մտածողության զարգացում:
- շեշտը դրվում է գործընթացի արդյունքի վրա:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ փոխգործուն մեթոդներով սովորած աշակերտները դրսևորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խորը ընկալում, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին:

Փոխգործուն մեթոդներից է Վեննի գծապատկերը: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոն հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս գծապատկերը կարելի է կիրառել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները բացահայտելու նպատակով: Նշված մեթոդը արդյունավետ է կիրառել <u>հականիշների, գոյականի թվի, անկախ և կախյալ դերբայների, վերաբերականների ու ձայնարկությունների, ենթակայի և ուղիղ խնդրի, կրավորական և ներգործական սեռի բայերի</u> և այլ թեմաների ուսուցման ժամանակ: Ուսուցիչը նախապես կարող է հանձնարարել հայոց պատմությունից կամ հայ գրականությունից որևէ թեմայի շրջանակում դուրս բերել հականիշներ, մենիմաստ և բազմիմաստ բառեր, ածականներ ու մակբայներ, վերաբերականներ ու ձայնարկություններ, այնուհետև նշված մեթոդի կիրառմամբ ցույց տալ երկու բառախմբերի տարբերությունները:



Մեթոդը հնարավոր է կիրառել ամփոփման, իսկ եթե հյուրը ծանոթ է, նաև նախապատրաստական փուլում:

Խառնված հերթականություններ մեթոդը ևս փոխգործուն մեթոդների շարքում է: Ամբողջ խմբի հետ փոխգործուն եղանակով աշխատելու նպատակով ուսուցիչը կարող է հայոց պատմության հետ միջառարկայական կապ ստեղծել նախադասությունների ուսուցման ժամանակ: Հաջորդ քայլի ժամանակ դասարանին առաջարկվում է որոշել՝ որ իրադարձությունը պատմագրական որ երկում է ծավալվել: Աշակերտները մեկ-մեկ մոտենում են և ընտրելով համապատասխան բառերը՝ կազմում են ճիշտ պարբերությունը: Երբ բոլորը համաձայնության են գալիս, ուսուցիչը հանձնարարում է ընթերցելիս ուշադիր գնել տեքստը ու տեսնել՝ արդյոք դասավորությունը համապատասխանում է տեքստի տարրերի դասավորությանը: Նշված մեթոդը կիրառելի է շարահյուսության ուսուցման բոլոր փուլերում:

Խորանարդում մեթոդն օգնում է առաջադրված հարցը դիտարկել տարբեր տեսանկյուններից: Ստվարաթղթից պատրաստված խորանարդի վեց նիստերից յուրաքանչյուրի վրա գրվում է առաջադրանքներից մեկը:

«Մտածի՛ր-զուգորդի՛ր-մտքեր փոխանակի՛ր»-ը արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որն աշակերտներին առաջարկում է կշռադատել տեքստի շուրջ և փոխգործուն մեթոդով ընկերների օգնությամբ ձևավորել մտքերը: Ուսուցիչը նախապես հարցեր է պատրաստում և առանձին աշակերտների առաջարկում է գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որը ամբողջացնում է երկուսի գաղափարները: Վերջում ուսուցիչը հարցնում է այնքան թվով զույգերի, որքան թույլ է տալիս ժամանակը, ապա քննարկում են արդյունքները:

Հայոց լեզվի տարբեր թեմաների ուսուցումը նպատակային է և գիտակցական, եթե դասի ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու, իմանալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսքը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Գեղարվեստական գրականության, հայ պատմության հետ միջառարկայական կապերի օգտագործումը հայոց լեզվի դասերին օգնում է առավել լավ ընկալելու լեզվական իրողություններն ու կանոնները: Փաստի ու երևակայականի համեմատական վերլուծությունն ու տարբերությունների նախանշումը նպաստում են աշակերտների վերլուծելու հմտությունների և առհասարակ մտածողության զարգացմանը: Գեղարվեստական գրականության մեջ արտացոլված պատմական իրողությունները տարբեր քննարկումների ու համեմատությունների հնարավորություն են ընձեռում՝ նպաստելով աշակերտների համագործակցային հմտությունների զարգացմանը:

Արդյունքում աշակերտների ձեռք բերած գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց լեզվի խոր և համակողմանի իմացությունը և այդ համատեքստում

գեղարվեստական գրականության օգտագործումը կօգնեն մեր հանրապետության ապագա քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

Գեղարվեստական գրականության, հայոց պատմության հետ միջառարկայական օգտագործումը հայոց լեզվի դասերին աշակերտների համար առավել ակներև կդարձնի ազգային–ազատագրական պայքարի հերոսական դրվագները,հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին՝ գաղափար տալով նաև հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին:

Գեղարվեստական գրականության օգտագործումը նաև միջոց է աշակերտներին առավել մանրամասնորեն ծանոթացնելու ժողովրդի մշակութային արժեքներին ու համամարդկային նվաճումներին, ցույց տալու ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը, վեր հանելու շինարարական տաղանդի ու արարումների լավագույն դրսևորումները՝ աշակերտների մեջ ներարկելով սեր ու հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

ԴԱՍԻ ՊԼԱՆ **1**

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ «Հայոց լեզու»
ԱՌԱՐԿԱՆ –ՄԱՑՐԵՆԻ
ԴԱՍԻ ՏԵՍԱԿԸ –Ամփոփման դաս
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ **–1** դասաժամ

Դասի նպատակները

- ✔ ամրակայել բանաստեղծությունը հասկանալով և արտահայտիչ կարդալու կարողությունը,
- ✔ զարգացնել բանաստեղծությունը վերուծելու կարողությունը՝ հետաքրքրություն ստեղծելով դեպի արծարծված թեման,
- ✔ ուշադրություն բևեռել նշված ստեղծագործության արծարծած գլխավոր գաղափարի վրա,
- ✔ ուսուցանել նոր բառեր, բառակապակցություններ,
- ✔ սովորեցնել հոմանիշներ,
- ✔ սովորել առած–ասացվածքներ:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- զարգացնել սովորողների վարժ և արտահայտիչ, հասկանալով կարդալու կարողությունները,
- հարստացնել սովորողների բառապաշարը,
- զարգացնել նախադասություններ կազմելու, սեփական մտքերը ճշգրտորեն արտահայտելու հմտությունները:
-

ՄԵԹՈԴՆԵՐԸ

Համագործակցային, փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդներ՝ մտագրոհ, պրոբլեմային հարց, խմբային աշխատանք, 5–բոպեանոց շարադրություն և այլն:

Անհրաժեշտ պարագաներ, կահավորում

Դասագիրք, հոմանիշների քարտ–բառեր, ուսումնաօժանդակ այլ նյութեր:

Կազմակերպման փուլ (2–3 բոպե)

Կատարվում է հին դասի /«Հայոց լեզու»/ հարցում: Ուսուցիչը աշակերտների հետ անցկացնում է զրույց հայոց լեզվի մասին: Աշակերտներն ասում է են լեզվին վերաբերող ասույթներ, բանաստեղծություններ: Ուսուցչուհին ընդգծում է լեզվի նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, մեր մշակույթի զարգացման գործում՝ միջառարկայական կապեր ստեղծելով հայ գրականության ու հայոց պատմության հետ:

Աշակերտները անգիր արտասանում են բանաստեղծությունը հատվածաբար, դերերով, իրար շարունակելով:



Աշակերտները բացատրում են ընդգծված բառերի /հնաբան, մեսրոպատառ, ջինջ, կայտառ, մեղմանուշ/ իմաստները: Ուսուցիչը թելադրում է, նշված բառերը գրում են գրատախտակին: Այնուհետև յուրաքանչյուր բառով կազմվում է նախադասությունը: Նկարչության հետ կապ ստեղծելով, Սարյանի նկարները ցուցադրելով՝ աշակերտները կիրառում են արդեն սովորած բառերը՝ բնորոշելով նշված կտավները:

Խորանարդման մեթոդով ուսուցիչը կազմում է առաջադրանք: Խորանարդի ամեն անկյունում գրված է բառ, օրինակ՝ աղբյուր, արհավիրք, պողպատ, անբիծ: Աշակերտները պետք է բացատրեն նշված բառերի իմաստները և դրանցով կազմեն նախադասություններ:

Աշակերտներին հանձնարարվում է հատկանիշ ցույց տվող բառերով բնութագրել հայոց լեզուն:

Ուսուցիչը համագործակցային մեթոդով կազմակերպում է խմբային աշխատանք: Դասարանը բաժանվում է երեք խմբի: Առաջին խումբը բանաստեղծությունից դուրս է բերում առարկա և անձ, երկրորդ խումբը՝ առարկայի հատկանիշ, երրորդ խումբը՝ գործողություն ցույց տվող բառերը: Դրանցով աշակերտները պետք է կազմեն պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություններ: Կատարվում է բառերի բարտագրում:

Հաջորդ առաջադրանքի հենակետային բառը «լեզու»-ն է: Աշակերտները նշված բառով պետք է կազմեն դարձվածքներ՝ բացատրելով դրանց իմաստները:

Նոր նյութի հաղորդումը կատարվում է մտագրոհ մեթոդով: Ալեքսանդր Ծատուրյանի «Կարդա» ստեղծագործության միջոցով ուսուցիչը պետք է աշակերտներին բացատրի գրքի ու գիտելիքի ուժն ու նշանակությունը: Աշակերտներին հարցեր են ուղղվում՝ ինչ նշանակություն ունի գիտելիքը մարդու կյանքում: Պրոբլեմային հարցեր են առաջադրվում: Աշակերտները պետք է ընկալեն, որ գիտելիքը ուժ է: Այնուհետև ուսուցիչը կարդում է ստեղծագործությունը և հատվածաբար ներկայացնում բանաստեղծության բովանդակությունը:

Մեջբերվում են գրքի, գիտելիքի մասին ասացվածքներ:

«Մտքերի բարտեզագրում» մեթոդի օգնությամբ ընդգծվում են ստեղծագործության գեղարվեստական այն պատկերները, որոնք արտացոլում են գիտելիքի կամ խելացի մարդու զորությունը, օրինակ՝ «Կարդացողի միտքն է կտրուկ», «Մտքով հեռու կսլանաս» և այլն::



Ինտերակտիվ մեթոդների օգնությամբ կազմակերպվում է խմբային աշխատանք:

Խմբային աշխատանք՝ համագործակցային մեթոդներով

Նոր ներմուծված բառերի արագնդման համար դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվում են հայտնի երգերի բառեր, որից սովորողները պետք է առանձնացնեն նախորդ դասին սովորած բառերը՝ նշելով դրանց իմաստները: Այդպես միջառարկայական կապ ենք ստեղծում երաժշտության հետ: Ամփոփման դասի ընթացքում ուսուցիչը ուշադրություն պետք է դարձնի նաև նոր դասի բառերին և հանձնարարի աշակերտներին կազմել բառակապակցություններ ու նախադասություններ «պայծառ», «լուսավոր», «արագ», «վճռական», «կտրուկ», «մայրենի» բառերով: Առաջադրանքների կատարումներից հետո գրատախտակին լրացվում է հետազոտական աղյուսակը՝

Խմբային աշխատանք **2.**

Աշակերտները պետք է պատասխանեն հետևյալ հացերին:

1. Ինչպիսի՞ն է կարդացած մարդը:

2. Գրքերից ի՞նչ ես իմանում:
3. Ի՞նչ գրքեր ես սիրում կարդալ:

Խմբային աշխատանք **3.**

Գրի՛ր փոքրիկ շարադրություն՝ «Իմ առաջին գիրքը» վերնագրով:

Աշխատանքի ավարտից հետո յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր աշխատանքը:

Հին թեմայի հարցումն ավարտվում է թեստային աշխատանքով, որը կազմվում է նախապես սովորած նյութի հիման վրա:

1. Քանի տարվա պատմություն ունի հայոց լեզուն:
   ա/ 4000, բ/ 5000, գ/ 3000
2. Արդյո՞ք հայոց լեզուն ունի պետական կարգավիճակ:
   ա/ այո, բ/ ոչ
3. Ճի՞շտ է արդյոք, որ հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է:
   ա/ այո, բ/ ոչ
4. Ո՞վ է ստեղծել հայերենի այբուբենը:
   ա/ Մեսրոպ Մաշտոց, բ/ Սահակ Պարթև, գ/ Մովսես Խորենացի
5. Ի՞նչ կազմություն ունի «մեսրոպատառ» բառը:
   ա/ պարզ, բ/ բարդ, գ/ ածանցավոր
6. Ո՞րն է «ջինջ» բառին հոմանիշ:
   ա/ կապույտ, բ/ պարզ, գ/ պղտոր
7. Ի՞նչ նշանակություն ունի «անբիծ» բառը:
   ա/ մաքուր, բ/ չգրված, գ/ սպիտակ
8. Ի՞նչ նշանակություն ունի «շիվ» բառը:
   ա/ ոստ, ընձյուղ, բ/ ծառ, գ/ անտառ
9. Ո՞վ է ասել՝ «Իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է հայոց լեզվին տիրապետելը»:
   ա/ Վ. Համբարձումյան, բ/ Ջ. Բայրոն
10. Ո՞րն է բարդ բառ:
   ա/ լեզվակ, բ/ լեզու, գ/ լեզվագետ

Հարցերի միջոցով ուսուցիչը պետք է պարզի դասի թերությունները ու առավելությունները: Ամբողջ դասի ընթացքում համեմատություններ են անցկացվում անցած և նոր դասերի միջև, և ամփոփվում են գիտելիքները:

Դասի ավարտին աշակերտները գրում են փոխադրություն՝ «Ո՞վ ու՞մ է նման» վերնագրով:

Ուսուցչուհին հատվածաբար կարդում է տեքստը, բացատրում նշված հատվածում արտացոլված գաղափարը: Գրատախտակին գրում է ուղղագրական որոշակի դժվարություն ունեցող, ինչպես նաև անծանոթ բառերը: Աշակերտներին հատվածաբար կարդալ է տալիս, այնուհետև սկսում են գրել փոխադրությունը: Գնահատումը պետք է կատարել ըստ խմբային և անհատական ցուցանիշների:

Ամփոփման դասի արդյունքում աշակերտները կկարողանան.

- պատկերացում կազմել և արժևորել մայրենի լեզվի կարևոր գործառույթը, կհասկանան, որ լեզուն ու գիտելիքը ուժ են,
- կկարողանան ընթերցել ստեղծագործությունները՝ վերլուծաբար մեկնաբանելով ընթերցած հատվածներում արտացոլված գաղափարները,
- կհամալրեն իրենց բառապաշարը, կկարողանան բացատրել նոր բառերի իմաստները, նրանցով կկազմեն պարզ համառոտ և ընդարձակ նախադասություններ,
- կսովորեն առած–ասացվածքներ:

ԴԱՍԻ ՊԼԱՆ **2**

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Թվական անուն
ԱՌԱՐԿԱՆ –Հայոց լեզու
ԴԱՍԻ ՏԵՍԱԿԸ –Մուտքի դաս
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ -1 դասաժամ

Նպատակը՝

1. Զևավորել թվականի տեսակները բանավոր և գրավոր խոսքում ճիշտ կիրառելու կարողություններ, ցույց տալ կիրառության ոլորտները

2.Նպաստել փաստարկված խոսք կազմելու մեջ թվականների արժևորմանը

3.Զևավորել խմբով աշխատելու համագործակցային տարրեր

4. Զևավորել միջառարկյական կապեր ստեղծելու կարողություններ

Խնդիրները՝

1.Տարբերակել խոսքի մասերի առանձնահատկությունները

2.Հաղորդակցության ընթացքում լեզվական միջոցների, կառույցների, լեզվական օրինաչափությունների և կանոնների գիտակցում

ԸՆթացքը՝

Դասի սկզբին խթանող հարցեր առաջադրել

Ի՞նչ եմ ակնկալում սովորել

ա/ Անսխալ կգրեմ և կարտասանեմ թվականները:
բ/ Գուցե և տարբերակեմ թիվ, թվանշան, թվային կարգ հասկացությունները:

Այնուհետև դասարանը բաժանել 5 խմբի

I խումբ Դուք այսօր մեր բնագետներն եք՝ մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ, աշխարհագետներ, կենսաբաններ **III խումբ** Դուք այսօր մեր ֆինանսիստ-տնտեսագետ եք , օգնեք էդիտ պրինտ խմբագրության տնօրենին ճիշտ կազմել ֆինանսական հաշվետվություն	**II խումբ** Դուք հեռուստահաղորդավարներ եք, պետք է գրագետ և շատ համոզիչ կարդաք ձեզ տրված հաղորդագրությունները Ունեք սպորտային մեկնաբան նաև եղանակի կանխատեսման մեկնաբան **IV խումբ** Դուք այսօր մեր բանաստեղծներն եք Կլուծեք հանելուկ, կվերծանեք ռեբուսը, կմեկնաբաբեք դարձվածքները

5-րդ խմբին հանձնարարել կազմել աշխատանքային պայմանագիր՝ կիրառելով թվականներ

Աշխատանքային պայմանագիր

Պայմանագրով հաշվարկների կարգը: Սույն պայմանագրով կատարվելիք աշխատանքների գինը որոշվում է Գործատուի կողմից տրամադրված նախահաշվարկի համաձայն և կազմում է 935678 դրամ(_____
_____
_____)դրամ

Դասի ավարտին հանձնարարել լրացնել տրված աղյուսակը

Սովորեցի՞ այն , ինչ ակնկալում էի	Իմ սպասելիքները չիրականացան
Ի՞նչ սվորեցի, ի՞նչն էր հետաքրքիր	Դժվարացա, որոշ բաներ մութ մնացին

Տանը հանձնարարել

Գրել փոքրածավալ շարադրանք/ ընտրությամբ/

ա/,, Եթե ես լինեի իմ սիրած դասական թվականը ,,

բ/ ,, Եթե ես լինեի իմ սիրած ֆանակակն թվականը ,, վերնագրերով

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միջառարկայական կապերի օգտագործումը հայոց լեզվի, մայրենիի դասերի ուսուցման գործընթացում հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

1. Կրթական բարեփոխումներն անխուսափելիորեն առաջ են բերում ուսուցչի ստանձնած դերի փոփոխություն: Այդ փոփոխության գործոնները բազմաթիվ են և պայմանավորված են նրանով, որ հասարակական արմատական վերափոխումների հետևանքով որակապես փոխվել է սերունդը՝ նրա մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները, հետևաբար՝ փոխվել են նաև կրթական խնդիրները, դրանց իրականացման պայմանները: Աշակերտը սովորում է ապրելով ու վերապրելով դասի ամբողջ ընթացքը, նրա համար հաճախ ավելի մեծ կարևորություն ունի ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը, ուսուցման գործընթացում իր ընդգրկվածության եղանակը, քան բուն գիտելիքն ինքնին: Այդ առումով միջառարկայական կապերը առանցքային դեր ունեն, քանի որ նպաստում են աշխարհահանաչողությանը, գիտելիքների ընդլայնմանը, քննադատական ու վերլուծական մտածողության զարգացմանը:

2. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան ուսուցման մեթոդների, եղանակների գիտականորեն մշակված այն համակարգն է, առանց որի հնարավոր չէ միջնակարգ դպրոցում մայրենի լեզվի լիարժեք և համակողմանի ուսուցումը: Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան իր բովանդակությամբ կապվում է երկու կողմերի՝ ուսուցչի և աշակերտի հետ: Նշված երկու կողմերը հարաբերվում են լեզուն ուսուցանելու հետ կապված տարբեր ոլորտներում՝ դպրոցական աշխատանք, տնային աշխատանք, ծրագրային հանձնարարություն, ծրագրից դուրս հանձնարարություն:

3. Հայոց լեզվի ուսուցչի կողմից գեղարվեստական գրականության, հայոց պատմության, նկարչության, երաժշտության միջառարկայական կապերի օգտագործումը դասավանդման ընթացքում ինքնանպատակ չէ: Նպատակ ունի զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները: Մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր չկան: Ցանկացած դասարան, ուսումնական գործընթաց եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել այդ եզակի իրավիճակին:

4. Միջառարկայական կապերի օգտագործումը հայոց լեզվի դասերին օգնում է ոչ միայն բացահայտել լեզվական իրողությունները, այլև համեմատական քննությամբ երևան հանել ազգային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Միջառարկայական կապերի կիրառման արդյունքում զարգանում են աշակերտների ճանաչողական հմտությունները, տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը, համագործակցային, հաղորդակցական և ինքնուրույն գործունեության կարողությունները ու հմտությունները ձևավորում են սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Լ. Ուսուցման մեթոդներ. Դրանց կիրառությունը// «Նախաշավիղ», Երևան, 2013, N2:
2. Մանկավարժություն (թարգմ. Հ. Հարությունյան), Երևան, 1948:
3. Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն: Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2002:
4. Абдуллаева Г. Д., Атажанов И. И., Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук, 2016, N3-3.
5. Гурьев А. И., Статус межпредметных связей в системе современного образования / А. И. Гурьев // «Наука и школа», 2002, N2.
6. Максимова В.Н., Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.:Просвещение, 1984.